21753
188

1912

361 [2m303
S-30

2010

361ԼՈՒՅՍ7
Տ-30

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԶՔԱՒՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ

„ԼՈՅՍ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ ԴՊՐՈՑԻ

1907—I/IX 1911

370
Ա382-Տ6

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕՔԱ» Մուզէյսկի պեր. № 8
1912

2002

361 ՀՈՒՅՍ
Տ-30
370
Զ38Զ-ՏԵ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԶՔԱՂՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ

«ԼՈՅՍ»

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1907—1911-1 սեպտ.

Ընկերութեան սկզբնաւորութիւնը

1907 թուի սկզբներին մի խումբ մարդկանց մէջ միտք է յղանում հիմնել Թիֆլիսում մի ընկերութիւն, որն իր խնամքի տակ վերցնելով դպրոցներից դուրս մնացած, որբ և չքաւոր հայ մանուկներին, տար նրանց սկզբնական ձրի ուսում և նիւթական օժանդակութիւն։

Այդ գեղեցիկ և բարի նպատակը գրաւում է դէպի իրեն մի որոշ թիւ մարդկանց, որոնք ծրագրելով այդ ընկերութեան ապագայ գործունէութիւնը, կազմում են նրա կանոնադրութիւնը, կոչելով ընկերութիւնը.

«Խեղճ հայ երեխաներին տարրական եւ միջնակարգ դպրոցներում օժանդակող Լոյս Ընկերութիւն»։

Կառավարութիւնը արգելքներ չդնելով, հաստատեց «Լոյս Ընկերութեան» կանոնադրութիւնը Մայիսի 17-ին 1907 թ. որից յետոյ Ընկերութիւնը պաշտօնապէս սկսեց իր գործունէութիւնը։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1907 թիւ Յունիսի 3-ին և 10-ին Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում՝ հիմնադիր անդամների հրաւէրով կայանում է երկու ընդհանուր ժողով, նախագահութեամբ Յովսէփ քհ. Տէր-Պետրոսեանի և Արշաւիր Նալբանդեանի, որտեղ մասնակցում էին մօտ 54 հոգի։ Օրակարգի առաջին հարցն էր, ընտրել վարչութեան անդամներ, փոխանդամներ և վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ։

Գաղտնի քուէարկութեամբ Վարչութեան անդամներ ընտրուեցին հետևեալ 12 հոգին՝

1. Լևոնեան Դարեգին
2. Նալբանդեան Արշաւիր
3. Տէր Պետրոսեան Յովսէփ քհ.
4. Մելիք-Մելքոնեան Օր. Լիզա
5. Գրիգորեան Արտաւազդ
6. Բաբայեան Կարապետ
7. Աբրահամեան Գրիգոր
8. Նահապետեան Յարութիւն
9. Զալապեան Մարիամ
10. Խաչիկեան Ստեփան
11. Աբեղեան Արտաշէս
12. Արարատեան Օր. Աստղիկ

Վարչութեան փոխ-անդամներ ընտրուեցին հետևեալ 4 հոգին։

1. Բաղդասարեան Աղէքսանդր
2. Գրիգորեան Գրիգոր
3. Պապովեան Գրիգոր
4. Դաւիթխանեան Դաւիթ

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրուեցին հետևեալները՝

1. Տիտոսեան Գրիգոր
2. Բլքեան Անդրանիկ
3. Առաքելեան Սոնիա

Որովհետև ընդհանուր ժողովում վերոյիշեալ ընտրութիւնների—վարչութեան մի քանի անդամների վերաբերմամբ—առարկութիւն էր եղել, թէ նուազ ձայն ստացած լինելով—չեն կարող համարուել անդամ, ուստի այս խնդիրը՝ նորընտիր վարչութեան Յունիսի 11-ի 1907 թ. նիստում քննութեան առնելով որոշուել է առժամանակ շարունակել վարչական նիստերը նոյն կազմով, մինչև ժամակայ ընդհանուր ժողովը, որտեղ կընշանակուի նոր ընտրութիւն։

Սակայն այս խնդիրը միանգամայն մէջ տեղից վերանալու համար վարչութեան մի քանի անդամները ներկայացնում են իրենց հրաժարականը, որը և ընդունւում է։

Այսպիսով Վարչութիւնը սկսում է իւր գործունէութիւնը Յունիսի 11-ից՝ ունենալով այդ օրից իւր կանոնաւոր նիստերը թւով 24, մինչև դեկտեմբեր 23-ը 1907 թ։

Վարչութեան Յունիս 14-ին կայացած 2-րդ նիստում գաղտնի քուէարկութեամբ վարչութեան նախագահ է ընտրուում՝ Լևոնեան Դարեգին, փոխ-նախագահ՝ Նալբանդեան Արշաւիր, Դանձապահ՝ օր. Մելիք-Մելքոնեան Լիզա, քարտուղար՝ Գրիգորեան Արտաւազդ, հաշուապահ՝ Բաբայեան Կարապետ։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Նախ և առաջ Վարչութիւնը խնդրում է հիմնադիր անդամներին ներկայացնել Ընկերութեան անցեալի հաշիւը, որից երևում է, որ 1907 թ. Փետրուարի 16-ից մինչև Յունիսի 19-ը մուտք է եղել ընդամենը 212 ռուբլի, իսկ ելք 109 ռ. 20 կ. մնացել է դրամ 102 ռ. 80 կոպ. որը և յանձնուել է նորընտիր վարչութեան։ Ապա վարչութիւնը օգտուելով իւր կանոնադրութեան 2-դ յօդուածից—որը իրաւունք է տալիս ընկերութեանը պահել իւր սեպհական տարրական դպրոցը—որոշում է ունենալ իւր դպրոցը, որի համար դիմում է Դովկասեան Ուսումնարանական շրջանի

Հոգաբարձուին, խնդրելով թույլ տալ «Լույս Ընկերութեան» բանալ Թիֆլիսում որբ և չքաւոր հայ երեխաների համար տարրական երկսեռ դպրոց։

1907 թ. Նոյեմբերի 29-ին հետևեց Կովկասեան Ուսումնարանական շրջանի Հոգաբարձուի № 21762 գրութիւնը, որով թոյլ էր տրւում «Լույս Ընկերութեան» բանալ դպրոցը, ղեկավարուելով 1881 թուին Յունվարի 13-ի Կովկասի փոխարքայի կողմից հաստատուած ուսումնական ծրագրով, որով դասաւանութիւնը կատարուելու է մայրենի լեզուով, համահաւասար անցնելով և ռուսաց լեզուն։ Միւս կողմից Ընկերութեան նիւթական միջոցները աւելացնելու համար Վարչութիւնը կազմակերպել է և մի զբօսանք Պալերմо այգում և աշխատել անդամների թիւը աւելացնել։ Մինչ այս գործերը կատարում էր, 1907 թիւը վերջանալու վրայ էր և Վարչութիւնը պատրաստւում էր ընդհանուր ժողով հրաւիրելու և չնայած, որ դպրոց բանալու թոյլտուութիւնը պաշտօնապէս ստացուած էր, բայց այդ խնդիրը թողնուեց նոր ընտրուելի Վարչութեան տնօրինութեան։

1908 թ. Յունվար ամսին տեղի ունեցաւ «Լույս Ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Օրակարգի հարցերն էին.

1. Հաշուէտուութիւն
2. Վարչութեան զեկուցումը
3. Դպրոցական խնդիր և կանոնագրութեան փոփոխումն
4. Ընտրութիւններ։

Հաշուէտուութեան մասին տեղեկութիւններ է հաղորդել ժողովին Վարչութեան անդամ Կարապետ Բաբայեան, իսկ Վարչութեան զեկուցումից, դպրոցական և կանոնագրութեան փոփոխումի մասին խօսելուց յետոյ, ժողովը անցել է ընտրութիւնների հարցին. Վարչութեան անդամներ ընտրուել են հետևեալները՝

1. Լևոնեան Գարեգին
2. Տէր Պետրոսեան Յովսէփ քհ.

3. Մելիք-Մելքոնեան Օր. Լիզա
4. Գրիգորեան Արտաւազդ
5. Ղլիչեան Կոստանդին
6. Շերմազանեան Տիկ. Սաթենիկ
7. Հինայէկեան Սեդրակ

Փոխ-անդամներ ընտրուել են հետևեալները՝

1. Սողոմոնեան Տիկ. Աննա
2. տ. Հինայէկեան
3. Օր. Տէր Յովհաննիսեան

Վերատեսուչ յանձնաժողովի անդամներ ընտրուել են

1. Քաթանեան Տիկ. Սիրանոյշ
2. Բաբայեան Կարապետ
3. Սողոմոնեան Ենովք

Իսկ 1908 թ. Յուվարի 30 ի նիստում՝ Վարչութեան Նախագահ ընտրուեց՝ Լևոնեան Գարեգին, փոխ-նախագահ՝ Յովսէփ քհ. Տէր Պետրոսեան, քարտուղար՝ Գրիգորեան Արտաւազդ, գանձապահ՝ Մելիք-Մելքոնեան օր. Լիզա, Ղլիչեան Կոստանդին։ Վարչութիւնը սոյն տարուց մինչև հոկտեմբերի 17-ը ունեցել է 15 նիստ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍԸ

1907/1908 ուսումնական տարուայ առաջին կէսը թէպէտ անցած էր, բայց Վարչութիւնը այնուամենայնիւ աշխատում է բանալ դպրոցը, այդ նպատակով նա դիմում է Մէյդանի Սբ. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութեան և խնդրում, որ նրանց դպրոցի դասերը վերջանալուց յետոյ, ուսումնարանի շէնքը դնեն իրենց տրամադրութեան տակ։

Հոգաբարձութիւնը սիրով յանձն է առնում և յայտնում է իւր համաձայնութիւնը, աչքի առաջ ունենալով գործի բարի նպատակը։

Վարչութիւնը ապա կատարելով աշակերտների ընդունելութիւն—թուով 50, երեսուն տղայ և 20 աղջիկ, բաց

է անում նրանց համար I բաժանմունք, հրաւիրելով վարժուհիներ՝ տիկ. Սիր. Զաւէնին և օր. Մարիամ Յովհաննիսեանին. վերջինս յանձն էր առել վերակացուհու պաշտօնը ձրի։ Փետրուարից սկսւում են պարապմունքները, որոնք տևում են մինչև յունիսի վերջը 1908 թ.։ Ընկերութեանը նպաստած լինելու համար, յանձն են առնում ձրի պարապելու կրօնից՝ Յովսէփ քհ. Տէր Պետրոսեան, նկարչութիւնից՝ Լևոնեան Գարեգին, իսկ երգեցողութեան դասերի համար հրաւիրւում է պ. Ազատ Մանուկեան, որ պարապում է միայն 20 դաս, իւրաքանչիւր դասի համար ստանալով մէկ ռուբլի, իսկ մէկ վարժուհու վարձը որոշուած էր փետրվարի 1-ից մինչև 1-ն Սեպտեմբերի 245 ռ. կամ ամսական 35 ռուբլի։

Հաշուէտուութեան վերաբերմամբ Վարչութիւնը որոշել էր տարին հաշուել Յունվարից-Յունվար և հաշիւները փակել իւրաքանչիւր տարուայ Դեկտեմբեր 31-ին։

Այս տարում Վարչութիւնը ստացաւ «Աշակերտական Միութիւնից» պ. Զ. Զօրեանի միջոցաւ 200-ի չափ ընթերցանութեան մանկական գրքեր, որի համար յայտնեց իւր շնորհակալութիւնը։ Նոյնպէս շնորհակալութեան արժանացաւ օր. Մ. Յովհաննիսեանը ձրի վերակացութեան պաշտօն կատարելու համար դպրոցում։

1907/1908 ուսումնական տարուայ վերջը տեղի են ունենում հարցաքննութիւններ. աշակերտների անցածի հետ ծանօթանալու համար։ Սոյն տարում դպրոցի ընդհանուր վերահսկիչ էր նշանակուած Վարչութեան նախագահ պ. Գ. Լևոնեան։

Այս տարում աշակերտ-աշակերտուհիներին բաժանուեցան ձրի ուսումնական պիտոյքներ, իսկ Կուկիայի Սբ. Աստուածածնի ծխական դպրոցի աշակերտուհի Մարիամ Յակոբեանին չքաւորութեան համար վճարուեց ուսման վարձ 10 ռուբլի, Ներսիսեան դպրոցի 3 աշակերտների վերաքննութեան պատրաստուելու համար վարձուեցին երկու ուսուցիչ մինչև Սեպտեմբերի 1-ը պարապելու, որոնց վճարեց ընկերութիւնը 30 ռուբլի։

1908 թ. Ապրիլի սկզբին տեղի է ունենում հին և նոր Վարչութեան անդամների խառն ժողովը, որտեղ հին վարչութիւնը յանձնում է նորին հետևեալ գոյքը՝ (մինչ 1-ն Փետրվարի 1908 թ.)

1. Կանխիկ դրամ 310 ռուբ. 76 կ.
2. Ընթերցանութեան գրքեր ցուցակով 13 ռուբ.
3. Գրասենեակի իրեր և արհեստագիտական գործիքներ 26 ռուբ. 50 կոպ.
4. Ապրանք ցուցակով 130 ռուբլի 73 կոպ.
5. Ապառիկներ ցուցակով 50 ռուբլի 85 կոպ.

Ընդամենը 531 ռուբլի 84 կոպէկի գոյք։

Այս տարում վարչութիւնը աշխատել է ներկայացումներ, զբօսանքներ և երեկոյթներ կազմակերպելով, աւելացնել Ընկերութեան նիւթական միջոցները դպրոցը պահպանելու համար։

Բացի այդ Վարչութիւնը իւր առանձին ներկայացուցիչներով մասնակցել է նշանաւոր և հասարակական բնաւորութիւն կրող տօնախմբութիւնների։ Այսպէս՝ թեմական առաջնորդի հրաւէրով մասնակցել է՝ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայի՝ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի 50 ամեայ գրեղ և մեծ յոբելեանական հանդիսին։

Վրաց յայտնի բանաստեղծ Ակակի Ծերեթելու 50-ամեայ գրական գործունէութեան և մեր տաղանդաւոր գրող Լէօի (Առաքել Բաբախանեանի) յոբելեաններին։

1908/1909 ուսումնական տարին մօտ լինելով Վարչութիւնը որոշում է այդ տարում բանալ երկու բաժանմունք I և II։ Երկրորդի համար արդէն ունենալով աշակերտներ. որոշում է I բաժանմունքի համար նոր ընդունելութիւններ կատարել։ Իսկ դպրոցական նախահաշիւն էլ կազմում է հետևեալ կերպով՝

Նախահաշիւ 1908/1909 Ուսումն. տարուայ

ՄՈՒՏՔ			ԵԼՔ		
Ընկերութիւնն ունի կանխիկ	700	—	I Բաժանմունքի 20 դասի համար դասագին 30 բուբլի	600	—
Անդամավճարներից	100	—	II Բաժանմունքի 26 դասի համար դասագին 30 բուբլի	780	—
Երեկոյթից (կայանալիք)	200	—	Դպր. ծառայի վարձ	90	—
Զբօսանքից »	300	—	Զանազան ծախքեր Ընկերութեան և թէ դպրոցի	30	—
Նուէրներ սպասելիք	200	—			
	1500	—		1500	—

Դպրոցը տեղաւորելու համար, Վարչութիւնը դիմում է Զգրաշէնի եկեղեցու ծխական հոգաբարձութեան խնդրելով ճաշերից յետոյ՝ դպրոցի 2 դասարան դնել իրենց տրամադրութեան տակ պարապմունքները սկսելու համար։ Հոգաբարձութիւնը աչքի առաջ ունենալով ընկերութեան սուղ միջոցները և հայ չքաւոր մանուկների ձրի ուսում տանալը, սիրայօժար յանձն առաւ կատարել Վարչութեան առաջարկութիւնը, յատկացնելով դպրոցի սենեակները այդ նպատակի համար։

Այնուհետև կազմուեց ուսուցչական խումբը հետևեալ անձինքներից.

Ուսուցչական ցանկ 1908/1909 ուսումն. տարուայ

№	ԱՆՈՒՆ ԵՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԴԱՍԱՏՈՒԻ	I Բաժանմ.	II Բաժանմ.	Որտեղ են աւարտել
1.	Տ. Վարսենիկ Նազարեան աւագ վարժուհի	2 դաս ձեռագործ.	6 դ. հ. լեզ. 2 դ. ձեռագ.	Թիֆ. 3-դ իգ.գիմն և Թիֆ. Завед. Св. Нины մանկագիտ. VIII դասարանը
2.	Տ. Շուշանիկ Խաչատրեան	6 դ. հայ լեզու	6 դ. ռուս. լ.	Թիֆ. Завед. Св. Нины VIII դասար.
3.	Տ. Լիզա Գրիգորեան » »	2 դ. նկարչ. 2 դ. իրաղն.	2 դ. նկարչ. 2 դ. իրաղն.	Բագուի իգ. գիմնազ. VII դասարանը
4.	Օր. Մ. Սոլովեան	4 դ. թուար.	4 դ. թուար.	Աստրախանի իգակ. գիմնազ. VII դաս.
5.	պ. Միքայել Միրզայեան » »	2 դ. կրօն 2 դ. երգ.	2 դ. կրօն 2 դ. երգ.	Ներսիսեան դպրոցի VII դասարանը
	Գումարը	20 դաս	26 դաս	

Դասատուների վարձատրութիւնը եղել է դասագնով, այն է 30 բուբլի դասագին։

Ապա կատարուեցան աշակերտների ընդունելութիւնը. գլխաւորապէս առաջին բաժանմունքի և մասամբ երկրորդ բաժանմունքի։

I Բաժանմ. կային 52 աշակերտ՝ 24 տղայ և 28 աղջիկ
II » » 50 » 27 » և 23 »

Երկու բաժանմունքում կային 102 աշակերտ, որից 51 տղայ, 51 աղջիկ։ Դասերը սկսուեցին 1908 թ. Սեպտեմբերի 16-ին և տևեցին մինչև 20 Մայիսի 1909 թ. Պարապմունքները տեղի էին ունենում ժամ $12^1/_2$-ից մինչև երեկոյեան $4^1/_2$ ժամը։ Տարուայ վերջը Ա. բաժանմունքից փոխադրուեցին բ. բաժանմունքը 18 տղայ և 22 աղջիկ, ընդամենը 40 հոգի. մնացին դասարանում 6 տղայ և 6 աղջիկ, ընդամենը 12 հոգի։ Բ. բաժանմունքից փոխադրուեցան գ. բաժանմունք՝ 18 տղայ և 20 աղջիկ, ընդամենը 38 հոգի. մնացին դասարանում 7 տղայ և 5 աղջիկ ընդամենը 12 հոգի։

Տարուայ ընթացքում, չնայած որ դպրոցի աշակերտները ամենաչքաւոր դասակարգից էին և վատ պայմանների մէջ, մահուան դէպք տեղի չէ ունեցել և ոչ էլ ծանր կամ տարափոխիկ հիւանդութիւններ։

Այստեղ յիշելու է այն հանգամանքը, որ «Լոյս ընկերութեան» գոյութեան հէնց առաջին տարուանից, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, հայ ժողովրդի փայփայած, բազմագործ և պատկառելի այս ընկերութիւնը—նկատելով «Լոյս Ընկերութեան» համակրելի ձգտումները—երբէք չէ խնայել նրան իւր օգնութիւնը ամեն տեսակ, մասնաւորապէս իւր ձրի ճաշարանից ձրի ճաշ մատակարարելով բաւական թուով՝ 15-ից—25 հայ չքաւոր երեխաներին ամենայն տարի, երբեմնապէս և հագուստեղէն տալով նրանց, որով մեծապէս նպաստել է այդ երեխաներին կանոնաւորապէս դպրոց յաճախելու և օգտաւէտ դարձնելու նրանց տուած ձրի ուսումը։ Այս առթիւ քանիցս անգամ

«Լոյս Ընկերութեան» ընդհանուր ժողովները իրենց խորին շնորհակալութիւնն են յայտնել Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին։

Բացի ուսման հոգսը «Լոյս Ընկերութեան» վարչութիւնը դիմել է զանազան բարեգործ անձանց դպրոցի չքաւոր երեխաների հագուստեղէնի համար և շնորհակալութեամբ ստացել է նուէրներ հետևեալներից՝

պ. պ. Տ. և Ա. Աֆրիկեաններից	60	արշին	չթեղէն
» Կիրակոսով և Օհանովից	60	»	»
» Ռոտինեանից	30	»	»
» Ա. Ամիրաղեանից	22	»	»
» Կաֆիեվից	6	»	կրէտոն
» Փարսադանովից	10	»	»
» Կաճկաճեանից	6	»	»
» Գաբինեանից		պաստառ	

օր. Կ. Կուլիջանեանի պանսիոնի երեխաներից նուէր աղքատ երեխաներին 21 արշին մահուդեղէն և այլ նուէրներ շորեղէն, որոնք կարել տալով բաժանուել են ամենաչքաւորներին։ Այսպիսով 12 աղջիկ և 14 տղայ ձմրան ցրտերին ստացել են տաք հագուստեղէն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Որպէս զի պարզ լինի ընկերութեան նիւթական դրութիւնը, առաջ ենք բերում 1907 և 1908 թուերի միացեալ հաշիւը դրամարկղի վերաբերեալ, մուտքի և ելքի յօդուածներով, որից երևում է, որ ընկերութիւնը ընդհանուր մուտք է ունեցել 4025 ռ. 53 կոպ. իսկ ելք 3784 ռ. 84 կոպ. մնացորդ առ 1-ն Յունվար 1909 թ. 240 ռ. 69 կոպ.,

Զբօսանքներ և ներկայացումներ կազմակերպելիս Վարչութիւնը միշտ դիմել է իրերի ժողովարարութեան, տոմսակներ ցրելու, հրաւէրներ կարդալու, նպաստներ խնդրելու և ամեն ժամանակ հասարակութեան ջերմ համակրանքի հետ միասին ստացել է ամեն տեսակ օգնութիւն՝ թէ դրամով, թէ իրերով և թէ բարոյական աջակցութեամբ, որպիսի անձանց Վարչութիւնը իւր շնորհակալութիւնն է յայտնել ժամանակին։

ՑԱՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

1907 և 1908 ԹՈՒԵՐԻ

1. պ. Ամբարդանեան Սրապիոն
2. պ. Անակեան Մարտիրոս
3. պ. Բասենցեան Յակոպ
4. պ. Բասենցեան Խաչատուր
5. օր. Բերեան Մարիամ
6. պ. Բաբայեան Կարապետ
7. պ. Բաղդասարեան Յովհաննէս
8. օր. Գաբինեան Անանա
9. օր. Գրիգորեան Լիզա (գանձապահ)
10. պ. Գրիգորեան Արտաւազդ (քարտուղար)
11. տ. Դաւրիշեան Մարիամ
12. պ. Եւանգուլեան Ստեփան
13. տ. Եաղուբեան Վարսենիկ
14. պ. Զօրեան Զոհրաբ
15. Իւանեան Սիրանոյշ
16. պ. Լէկրեանց Մինաս
27. պ. Լևոնեան Գարեգին (նախագահ)
18. տ. Խաժակնեան Շուշանիկ
19. պ. Կաւալեան Աւագ
20. պ. Ղալէչեան Խաչատուր
21. պ. Ղամբարեան Յովհաննէս
22. պ. Ղալթաղեան Միքայէլ
23. պ. Ղասապեան Արշակ
24. պ. Ղլիչեան Կոստանդին (հաշուապահ)
25. պ. Մանուկեան Մնացական
26. տ. Մամուլեան Վիրգինէ
27. օր. Մովսիսեան Վարսենիկ
28. օր. Մովսիսեան Սաթենիկ
29. պ. Մարգարեան Մովսէս
30. պ. Մելիք Այվազեան Աղասի †
31. պ. Մելիք Մուշ-Ղամբարեան Հայրապետ

32. Մելիք Մուշ-Ղամբարեան Աննա
33. պ. Միրզայեան Միքայէլ
34. օր. Յակոբջանեան Նատալիա
35. պ. Յովհաննիսեան Հմայեակ
36. պ. Յովհաննիսեան Յովհաննէս
37. պ. Նահապետեան Յովհաննէս
38. պ. Զմշկեան Արամ
39. պ. Պապովեան Գրիգոր
40. օր. Պապովեան Եւա
41. պ. Սողոմոնեան Կոստանդին
42. պ. Սաղաթէլեան Մարգար
43. պ. Ստեփանեան Սիմէօն
44. պ. Վասիլեան Յովնան
45. պ. Տէր Պետրոսեան Սաշա
46. Տէր Պետրոսեան Յովսէփ քհ. (փոխնախագահ)
47. Տէր Պետրոսեան Զաւահիր
48. պ. Փաշայեան Արամ
49. օր. Քալանթարեան Թամարա
50. տ. Քաթանեան Սիրանոյշ
51. պ. Քոչարեան Կոստանդին
52. պ. Ֆրանգուլեան Տիգրան

ԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԱՅԻԸ

	Մնում է դրամարկղում առ 1-ն Յունիս 1907 թիւ			102	80
1	**Անդամավճար.**				
	Ստացուած է անդամավճար 1907/908 թ.	112	40		
2	**Զբոսանքներից եւ ներկայացումներից**				
	Պալէրմօ այգու զբօսանքից 26/VIII 907 թ.	550	22		
	Թիֆլ. ձմերային ժողով. ներկայացումից 26/III 908 թ.	1000	05		
	Ամարային ժողով. այգու զբօսանքից 19/IV 908 թ.	821	19		
	Ձմերային ժողովար. ներկայացումից 14/XII 908 թ.	792	93		
3	**Առեւտրական բանկ**				
	Ստացուած է առեւտրական բանկից հասարակ ընթացիկ հաշուով . . .	570	—		
4	**Նուէրներ**				
	Ստացուած են նուէրներ	7	50		
3	**Ապառիկներ**				
	Ստացուած են ապառիկներից . . .	68	44		
				3922	73
	Փոխադրելի			4025	53

	Զբօսանքներ և ներկայացումներ				
	Ծախսուած է Պալէրմօ այգու զբօսանքին 26/VIII 907 թ.	291	53		
	» Ձմերային ժողովար, ներկայացման 26/III 908 թ.	333	56		
	» Ամարային ժողովար. այգում զբօսանքի 19/IV 908 թ.	487	18		
	» Ձմերային ժողովարանում ներկայացմ. 14/XII 908 թ. . . .	369	90	1482	17
	Դպրոցական ծախքեր. Ուսումնական 1/2 տարուայ համար				
	Ծախսուած է 1908 1/II-1/IX 908 թ., վարժուհու ռօճիկ.	245	—		
	» Երգեցողութեան Ուսուցչին 20 դասի համար.	20	—		
	» Դպրոցի ծառային	20	—		
	» Գրքերի և դասական պիտոյքների համար	14	60		
	» Զքաւոր երեխաներին բաժանելու համար. ոտնամանների, գուլպանների և այլն.	37	80		
	Մանր ծախքեր	13	60	351	—
	Դպրոցական ծախքեր 1908/1909 ուսում առաջ. 1/2 տարուայ				
	Ռոճիկ դասատուներին (44 դ. × 30 ր. = 1320 ռուբլուց).	460	—		
	Դպրոցի ծառային. (8 ամսի ռօճիկից 55 ռուբլուց)	25	—		
	Դասագրքերի և դասական պիտոյքների	33	43		
	Փոխադրելի . . .	518	43	1833	17

	Փոխադրեալ . . .			4025	53
	Թիֆլիսի Առեւտրական Բանկի.				
1908	*Մուծած է բանկը մի քանի անգամ.*			840	—
				840	—

	Փոխադրեալ . . .	518	43	1833	17
	Տօնածառի	10	—		
	Դպրոցի մանր ծախքեր	9	50	537	93
3	**Օժանդակութիւն**				
	Ներսիսեան դպրոցի 3 չքաւոր աշակերտի վերաքննութ. պատրաստուելու համար	30	—		
	Կուկիասի Ս. Աստծնի ծխ. դպրոցի մէկ աշակերտուհու թոշակ	10	—	40	—
4	**Դրասենեակի ծախք**				
	1907 թուի 2-դ կեսամեակի դրասենեակի վարձ	60	—		
	զանազան մանր ծախքեր դրասենեակի 1907 թիւ	37	08		
	Զանազան մանր ծախքեր դրասենեակի 1908 թիւ	16	05	113	13
5	**Ապառիկներ**				
	զանազան անձինքներից գանձելի. ապրարկուած տոմսակներով. զբօսանքների և ներկայացումների տոմսակների ծրարներով			420	61
6	**Առեւտրական. բանկ**				
	Մուցրած է Առեւտր. բանկը հասարակ ընթացիկ հաշուով			840	—
				3784	84
	Մնացորդ գումար փոխադրելի առ. 1-ն Յունուար *1909* թ.			240	69
				4025	53
	Հասարակ ընթացիկ հաշիւ				
1908	*Ստացուած է բանկից մի քանի նուազ*	570	—		
	Մնում է առ 1-ն Յունվար 1909 թ.	270	—	840	—
				840	—

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Публичная Библиотека 7/XI 1922 Ереван, Мясникян Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004/15299

ՏԵՂԵԿԱԳԻՐ

«ԼՈՅՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1909 Թ.

ԵՒ ԴՊՐՈՑԻ 1909/10 Թ.

ռով, գանձապահ. հաշուապահի պաշտօնը որոշուեցաւ յանձնել պ. Կ. Ղլիչեանին։

1909/1910 ուսումնական տարում Վարչութիւնը որոշած լինելով պահել Բ. և Գ. պատրաստական դասարանները, նորից դիմել է Մէյդանի Ս. Գէորգ եկեղեցու դպրոցի ծխական հոգաբարձութեան, խնդրելով, այս տարի ևս հիւրընկալել իրենց դպրոցի շէնքի մէջ Լոյս ընկերութեան աշակերտներին։ Հոգաբարձութիւնը սիրով համաձայնեց այդ առաջարկութեանը,

Նիւթական դրութեան սուղ լինելու պատճառով, Վարչութիւնը ստիպուած եղաւ դասագինը 30 ռուբլուց իջեցնել 25 ռուբլու, հրաւիրելով 4 վարժուհի և մէկ ուսուցիչ, ա_ագ վարժուհու պաշտօնը ժամանակաւորապէս յանձնելով տիկ. Վ. Եաղուբեանցին։

Դասերի քանակը վարչութիւնը որոշել է այսպէս՝ Բ. բաժանմունքում 23 դաս, Գ. բաժանմունքում 27 դաս. ընդամենը 50 դաս։

Նախ քան դպրոցական տեղեկագրին անցնելը, բերենք ընկերութեան այս տարուայ նախահաշիւը և դրամարկղի հաշիւը։

Նախահաշիւ 1909 թուի.

ՄՈՒՏՔ			ԵԼՔ		
Անդամավճարներ .	400	—	Դպրոց. ծախք Բ. և		
Զբօսանքից . . .	350	—	Գ. բաժանմունքի. .	1350	—
Երեկոյթ. և ներկ. .	450	—	Գրատեն. և ծառայի.	100	—
Նուէր. և նպաստ.	300	—	Մանր ծախքեր . .	50	—
	1500	—		1500	—

Դրամարկղի հաշիւ 1909 թուի

ՄՈՒՏՔ			ԵԼՔ		
Դրամարկղի ցայսրդը ամ. I/I 1909 . . .	240	69	Վճարած է 5 ուսուցիչներին.	1099	48
Թեֆ. տուած տարի հ-նի թիվ-հ. հաշ. ցայսրիսկ	270	—	« Դպրոցի ծախքին	50	—
« « « « « %	9	29	« Դրամագրքի վերադարձ.	94	37
« « « « « %	100	—	« Զգեստների վերանորոգ.	17	69
Զբօսանքի մտ դիտ. Ամաչիտեանի տնից վերադարձ	215	75	« Մանկի վերցրածներ, դիտարան.	66	15
Ընդամենը գումար մտ դիտ.	300	10	Մնացորդ դեպի 1-ն Յունուար տարեմուտ 1910 թ.	42	02
« Դաշտ	50	—			
« Զգեստների վերադարձ	89	08			
« Դիվիդենդ	94	80			
« Տարեմուտ վերադարձ, տիկ. Կաթարդ					
	1369	71		1369	71

Տարուայ վերջը Վարչութիւնը փակելով հաշիւները առ 1-ն Յունուար 1910 թ. պարտ մնաց դպրոցի վարժուհիներին 227 թ. 16 կոպէկ, դասագրքերի և դասարանական պիտոյքների համար 47 թ. 50 կ. դպրոցի ծառային 10 ռուբլի, ընդհամենը 284 ռուբ. 66 կոպ.։

Ծախք որոշուած էր այսպէս՝ 1909/1010 ուսումն. տարուայ վարժուհիների ռոճիկը 1826 ռուբ. 64 կ. դպրոցի ծառային 60 ռ. դասագրքերի և դասարանական պիտոյքների համար 141 ռ. 87 կ. ընդամենը 1528 ռ. 51 կ.

1909/1910 Ուսումն. տարուայ դպրոցի տեղեկագիրը.

1909/1910 Ուսումն. դարում «Լոյս» ընկերութեան դպրոցը գտնուած էր Մէյդանի Ս. Գէորգ եկեղեցու ծխական դպրոցի շէնքում։ Դասերը տեղի էին ունենում ժամը $1^1/_2$-ից և տևում մինչև երեկոյեան ժամը չորսից մինչև հինգը։

Այս տարի պարապմունքները սկսուեցան սեպտեմբեր 26-ին և վերջացան 1910 թ. մայիսի վերջին։

Դպրոցը ունէր այս տարում երկու բաժանմունք Բ. և Գ. Բ. բաժանքում կային՝ 38 հոգի. 18 աղայ և 20 աղջիկ
Գ. « « 32 « 16 » և 16 »
երկու բաժանմունքում կային 70 աշակերտ. աշակերտուհի։

Տարուայ վերջը տեղի ունեցան սաուգութիւններ, որից յետոյ Բ. բաժանմունքից փոխադրուեցան Գ. բաժանմունք 25 հոգի, մնացին 10 հոգի, դպրոցից հեռացան 3 հոգի։

Գ. բաժանմունքից աւարտեցին և վկայական ստացան 14 հոգի. վերաքննութիւն ունէին 6 հոգի, որոնցից յաջող բռնեցին և աւարտեցին 3 հոգի, ընդամենը 17-ը. մնացին դասարանում 5 հոգի, դպրոցից հեռացան 7 հոգ։

Դպրոցից հեռանալու պատճառը. նախ այնէր, ծնողները որ երեխաներին տալիս էին արհեստ սովորելու, որ իրենց հացը և շորը գոնէ իրենք հանեն, որովհետև դպրոցը այնքան միջոց չունէր, որ բացի ձրի ուսում ից, հոգալ և միւս բոլոր նոցա կարիքները. և երկրորդ՝ քաղաքից տեղափոխուելը ուրիշ քաղաք կամ գիւղ։

Դպրոցի աշակերտները լինելով՝ ըստ մեծի մասին որը և կամ ամենաչքաւոր դասակարգից-բոլորն ևս առանց բացառութեան ազատ էին միանգամայն ուսման վճարից, միայն ամբողջ տարուայ համար, դասագրքերի, տետրակների, և այլ դասարանական պիտոյքների համար, նրանք որոնք կարող էին, յոժարակամ բերում էին տարեկան 1—2 ռուբլի, միւս մնացածները ստանում էին ընկերութիւնից ձրի։

Չնայած, որ ընկերութիւնը իւր սուղ միջոցներից՝ կամ գնելով և կամ հաւաքելով բաժանում էր աշակերտների մի մասին և հանդերձեղէն և ոտնաման, բայց և այնպէս, մեծ մասը, կարիք ունէր դարձեալ հագուստի և սնունդի։

Այս տարի Հայոց Բարեգործական ընկերութեան ճաշարանից ստանում էին ձրի ճաշ 15 հոգի—6 տղայ և 9 աղջիկ։

Դպրոցական առանձին շէնք չունենալը, դասերի ուշ սկսելը, մանուկների ամենաաղքատ վիճակը, ընկերութեան միջոցների պակասութիւնը-զօրեղ կերպով անդրադառնում էր երեխաների թէ ֆիզիքական և թէ մտաւոր առաջադիմութեան վերայ։

1909/10 Ուսումն. կան տարում դպրոցի մանկավարժական խումբը բաղկացած էր 5 հոգոց. 4 վարժուհի և 1 ուսուցիչ, որոնց ցանկը և աւանդած առարկաները ստոր իշուած ցուցակից կ'երևայ։

Կարգ.	1909/10 Ուս. տարում աւարտող աշակերտ.	№ № Վկայագ.
1	Ամբրոյեան Արեգնազան	1
2	Աւագեան Յովհաննէս	2
3	Գրիգորեան Լիպարիտ	3
4	Զրխիլեան Սրբուհի	4
5	Լուսինեան Սաթենիկ	5
6	Մկրտչեան Գէորգ	6
7	Մուրադեան Աբրահամ	7
8	Յակոպեան Մանեակ	8
9	Յովսէփեան Ռէհան	9
10	Նաւակատիկեան Հայկ	10
11	Տէր-Ղազարեան Սարգիս	11
12	Տէր Պօղոսեան Մարիամ	12
13	Օդաբաշեան Բեթղէհէմ	13
14	Աբովեան Սիմէօն	14
15	Պետրոսեան Վարսենիկ	15
16	Բաղդասարեան Սիրանոյշ	16
17	Ոսկանեան Սաթենիկ	17

1909/1910

Կարգ	Անուն և ազգանուն ուսուցիչների	Ի նշ. ամսական դասերն									Շաբաթական դասերի թիւը.	Տարուայ մէջ բաց թողած դասերի թիւը	աւել պարապած.	Ինչ՞ ցեղից ունին
		Կրօն	Հ. Լ.	Ռ. Լ.	Թուաբ	Աշխար.	Բն. պատ.	Իրաւն.	Նկարչ.	Երգ.	Հեռագ.			
1	տիկ. Վ. Ճարուքեան	—	—	12	—	—	2	2	4	—	2	10	30	12	Փ. III դպ. և 8 մ. դ.
2	„ Շ. Խաժակեան	—	—	—	—	—	—	—	—	—	—	12	48	15	Փ. Յ. Սբ. Հ. և մ. 8 դ.
3	„ Լ. Գրիգորեան .	—	—	—	8	2	—	—	—	—	—	10	32	12	Բաղրամի իգական գիմ.
4	օր. Մ. Հէրեան . .	—	10	—	—	—	—	—	—	—	—	10	18	8	Փ. Յոլհն. օր. դ և ցն.
5	պ. Մ. Մկրտչեան .	4	—	—	—	—	—	—	—	4	—	8	24	6	Նկարիչ. Նոպ. Դպրոց.
		4	10	12	8	2	2	2	4	4	2	50	152	53	

Ի՞նչ Առարկաներ են անցել	Ո՞րքան դաս II բաժ.	Ո՞րքան դաս III բաժ.
	Շաբաթական	
Կրօն	2	2
Հայոց լեզու	5	5
Ռուսաց լեզու	6	6
Թուաբանութիւն	4	4
Աշխարհագրութիւն	—	2
Բնական պատմութիւն	—	2
Իրաւունքութիւն	1	1
Նկարչութիւն	2	2
Երգեցողութիւն	2	2
Ձեռագործ	1	1
Դումարն է	23	27

Տարուայ վերջը աշակերտներին ցոյց է տրուած մոգական լապտերով պատկերներ, որոնք եղել են նոցա հասակի և զարգացման համեմատ, բացատրութիւններով հանդերձ։

Քննութիւններից յետոյ՝ աշակերտները Վարչութեան անդամների և դասատուների հետ միասին գնացել են զբօսանքի բուսաբանական այգին, որտեղ նոցա տրուել է թէյ, նախաճաշ և միրգ, յետոյ մտել են ջերմանոց (оранжерея), դիտել են, զբօսնել են շրջակայքը, և ամեն տեղ եղել են հարց ու փորձ, բացատրութիւններ մանուկների անցած առարկաների վերաբերեալ։ Երգեցողութեան ուսուցչի ղեկավարութեամբ տեղի է ունեցել խմբական երգեցողութիւն և ուրախ տրամադրութեան տակ աշակերտները վերադարձել են զբօսանքից իրենց տները։

1910 թ. Մայիս 5-ին Արտիստական Ընկերութեան պարտիզում-յօդուտ «Լոյս» ընկերութեան դրած զբօսանքին, Վարչութեան որոշմամբ, դարձեալ դպրոցի աշակերտները մասնակցել են զբօսանքին խաղերով և խմբական երգերով դասատուների հսկողութեամբ։

Ուսումնական տարուայ վերջը երբ առաջին աւարտող աշակերտներին պէտք է բաժանուէին վկայականներ, Վարչութեան կարգադրութեամբ Մէյդանի Ս. Գէորգ եկեղեցու դպրոցում նշանակուեցաւ դպրոցական ակտ, որտեղ հրաւիրուած էին ընկերութեան անդամները, դպրոցի աշակերտները և նոցա ծնողները։

Ընկերութեան անդամ արժանապատիւ Հայր Եփրեմ վարդապետ Սուքիասեան (այժմ եպիսկոպոս և Առաջնորդ. փոխանորդ Թիֆլիսի) բանալով դպրոցական հանդէսը, օրհնելով աշակերտներին և նոցա խնամողներին, հակիրճ և ոգեղու կերպով գովելով «Լոյս» ընկերութեան նպատակը և գործունէութիւնը, հրաւէր կարդաց ներկայ եղողներին չ՚ընայել իրենց օգնութիւնը այդպիսի մի Աստուածահաճոյ գործի և իրենց կարողութեան չափով նպաստել աւելի զարգացնելու և առաջ տանելու որբ և չքաւոր հայ երեխաներին ձրի ուսում տալու և խնամելու դժուար ձեռնարկութիւնը։

Ա՛պա վարչութեան նախագահ պ. Ա. Աւագեանց մանրամասն զեկուցեց ներկայ եղողներին 1909/1910 ուսումնական տարուայ հաշիւը. ծանօթացրեց նրանց դպրոցի ներքին դրութեան հետ. հրաւիրեց աշակերտների ծնողների և խնամատարների առանձին ուշադրութիւնը-աչալուրջ հսկողութիւն ունենալ դպրոցից դուրս մանուկների վրայ, հետաքր. նրանց վարքի և առաջադիմութեան գործով. շուտ շուտ յաճախել դպրոց տեղեկանալու այդ մասին և ուսման ու դաստիարակութեան ծանր գործը ցանկալի յաջողութեան հասցնելու համար,

ուսուցիչների և դաստիարակների հետ ձեռք ձեռքի տուած աշխատեն-ժէկը միւսի պակասը լրացնելով։

Ապա տեղի ունեցան խմբական և առանձին երգեր, ոտանաւորներ, որից յետոյ բաժանուեցան աշակերտներին աւարտման վկայականները, յայտնելով, որ մինչև օգոստոս ամիսը ազատ են և յորդներ կարդալուց յետոյ նոցա, արձակեցին տուն, փակելով հանդէսը։

Ընկերութիւնը 1909 թուին ունեցել է 70 անդամ, որոնք, չնայած ընկերութեան կանոնադրութեամբ անդամվճարի մինիմումը որոշուած է տարեկան 3 ռուբլի, վճարել են տարբեր. ոմանք տարեկան 10 ռուբլի, ոմանք 6 ռուբլի և ոմանք 3 ռուբլի։

1909. ԹՈՒԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

1. Եփրեմ վարդ. Սուքիասեան (այժմ եպիսկոպոս)
2. Ալիխանեան Ղևոնդ քհյ.
3. տ. Ադամալեան Կ.
4. օր. Արեշեան Մ.
5. Ամբարդանեան Ս.
6. Անանեան Մ.
7. Բասենցեան Խ.
8. Բասենցեան Յ.
9. Բաբայեան Կ.
10. օր. Բերեան Մ.
11. Բաղդասարեան Յ.
12. տ. Գրիգորեան Լ.
13. օր. Դարինեան Ա.
14. Գրիգորեան Ա.
15. Ղլիչեան Կ.
16. օր. Դաւրիշեան Կ.
17. տ. Երզնկեան Հ.
18. տ. Եաղուբեան Վ.
19. Եւանգուլեան Ս.
20. Զաքարեան Մ.
21. Զօրեան Զ.
22. Լեկրեան Մ
23. Լևոնեան Գ.
24. տ. խաժակնեան Շ.
25. Խաչիկեան-Եազիչեան Ս.
26. տ. Խարազեան
27. Խուցեան Խորէն քհյ.
28. Կաւալեան Ա.
29. Ղալաչեան Խ.
30. Ղալթաղեան Մ.
31. Ղամբարեան Յ.
32. Ղասարեան Ա.
33. տ. Մամուլեան Վ.
34. տ. Մելիք Մուշղամբարեան Ա.
35. Մելիք Մուշղամբարեան Հ.
36. տ. Միլեան Վ.
37. տ. Մովսիսեան Ս.
38. օր. Մովսիսեան Վ.
39. Մանուկեան Մ.
40. Մարգարեան Մ.
41. Մելիք Այվազեան Ա. †.
42. Միրզայեան Մ.
43. Մկրտչեան Ս.
44. Յովհաննիսեան Հ.
45. Յովհաննիսեան Յ.
46. տ. Գասպարեան Ն.
47. Նահապետեան Յ.
48. Նազարեան Ս.
49. Զմշկեան Ա.
50. Պապովեան Գ.
51. տ. Պապովեան Ե.
52. Սողոմոնեան Ե.
53. Սաղաթելեան Մ.
54. Ստեփանեան Ս.
55. Սողոմոնեան Կ.
56. տ. Սողոմոնեան Ա.
57. Վասիլեան Հ.
58. Վարդանեան Վ.
59. Տէր Մովսիսեան Պ.
60. Տէր Մելիքսեան Հ.
61. օր. Տէր Յովհաննիսեան Վ.
62. օր. Տէր Պետրոսեան Զ.
63. տ. Տէր Վարդանեան Ա.
64. Տէր Պետրոսեան Յով. քհյ.
65. Փաշայեան Արամ
66. տ. Քաթանեան Ս.
67. տ. Քալանթարեան Թ.
68. Քոչարեան Կ.
69. օր. Քոչեան Ա.
70. Ֆրանգուլեան Տ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1910 թ.-I/IX 1911 թ.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1909 թուից նախկին Վարչութիւնը շարունակում էր իւր գործունէութիւնը մինչև 1909 թուի Մարտ ամիսը, երբ, նոյն ամսի 21-ին, հրաւիրուեցաւ Ընդհանուր Ժողով, որը կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում, նախագահութեամբ պ. Առաքել Աւագեանի։ Քարտուղարն էր պ. Արտաւազդ Գրիգորեան։ Ընդհանուր ժողովը քննելով Ընկերութեան 1909 թուի, և դպրոցի 1909/1910 ուսումնական տարուայ տեղեկագրերը և լսելով Վերաստուգիչ Յանձնաժողովի զեկուցումը այդ առթիւ, իւր գիտողութիւններն՝ հաշիւների և դպրոցական գործի վերաբերեալ անելուց յետոյ, հաստատեց այդպիսիները, ցանկութիւն յայտնելով ապագայում աւելի ևս բարգաւաճ դրութեան մէջ տեսնել Ընկերութեան վիճակը և դպրոցական գործը։

Ապա Ընդհանուր Ժողովը գաղտնի քուէարկութեամբ կատարեց ընտրութիւններ։ Վարչութեան անդամներ ընտրուեցան հետևեալները՝ տիկ. Սաթէնիկ Մալխասեան, տիկ. Արմենուհի Տէր-Վարդանեան, պ.պ. Գէորգ Խատիսեան, Առաքել Աւագեան, Ստեփան Գալստեան, Կոստանդին Ղլիչեան, Արտաւազդ Գրիգորեան, Յակոբ Բասենցեան և Արամ Զմշկեան։

Վարչութեան փոխանդամներ ընտրուեցան՝

Հայր Խորէն քհյ. Խուցեան, օր. Աղաւնի Քոչեան և պ. Համբարձում Տէր-Մէլիտոսեան։

Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամներ ընտրուեցան՝ պ.պ. Գարեգին Լևոնեան, Կոստանդին Քոչարեան և Մարգար Սաղաթէլեան։

Վերաստուգիչ Յանձնաժողովի փոխանդամներ ընտրուեցան՝ պ.պ. Սրապիոն Ամբարդանեան և Իսահակ Նազարեան։

Գ. Գ. Խատիսեանի, պ. Ստ. Գալստեանի և Յ. Բասենցեանի Վարչութեան կազմից հեռանալու պատճառով, նրանց տեղ հրաւիրուեցան Վարչութեան փոխանդամները։

Վարչութեան առաջին նիստում կատարուեցան ընտրութիւններ. Վարչութեան նախագահ՝ ընտրուեց պ. Ա. Աւագեան, փոխնախագահ՝ հայր Խորէն քհյ. Խուցեան, գանձապահ-հաշուապահ՝ պ. Կ. Ղլիչեան և քարտուղար՝ պ. Ա. Գրիգորեան. վերջինս բաւական ժամանակ կատարելով իւր պաշտօնը երբ ուսուցչութեան համար հրաւիրուեց ուրիշ քաղաք, նրա տեղը քարտուղարութեան պաշտօնը յանձնառաւ տիկ. Սաթ. Մալխասեանը։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Վերոյիշեալ կազմով Վարչութիւնը շարունակեց իւր գործունէութիւնը 1910 թուի Ապրիլ ամսից մինչև 1911 թուի Մայիսի 1-ի, Ընդհանուր Ժողովը, ունենալով ընդամենը 34 վարչական նիստ։

Վարչութիւնը ամենից առաջ ըստ սովորութեան, Ընդհանուր Ժողովի արդիւնքի մասին զեկուցեց Թիֆլիսի պ. Նահանգապետին ներկայացնելով նորընտիր Վարչութեան անդամների մանրամասն ցուցակը։

Ընկերութեան հաշուէտուութեան տարին համակերպելու համար դպրոցական ուսումնական տարուայ հետ, որոշուեցաւ տարին հաշուել սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը։ Այդ պատճառով սոյն տեղեկագիրը կազմուեց 1910 թուի յունվար 1-ից մինչև 1911 թուի սեպտեմբեր 1-ը, որից յետոյ արդէն Ընկերութեան և դպրոցի տեղեկագրերը զուգընթացաբար կ'ընթանան։

Նորընտիր Վարչութիւնը երբ սկսեց իւր գործունէ-

ութիւնը, չունէր իւր տրամադրութեան տակ հին Վարչութիւնից ստացած մի որևէ գումար, որ կարողանար գործադրել դպրոցի անհրաժեշտ կարիքների վերայ, որոնք հրաժայողաբար պահանջում էին այդ։ Այդ պատճառով Վարչութիւնը իսկոյն և ետ ձեռնարկեց կազմակերպել մի զբօսանք, որ տեղի ունեցաւ 1909 թուի Մայիսի 5-ին Արտիստիկական Ընկ. պարտիզում, որը զուտ արդիւնք տուեց 524 ր. 05 կոպէկ։

Վարչութիւնը աշխատել է, որքան հնարաւոր է եղել, աւելացնել ընկերութեան մուտքի աղբիւրները, խուսափելով աւելորդ ծախքերից։

Առանձին գրասենեակ և ծառայ պահելու փոխարէն Վարչութեան նախագահ պ. Ա. Աւագեան առաջարկեց իւր բնակարանը վարչական նիստերն ու գործավարութիւնը այնտեղ կատարելու համար, որպիսի առաջարկութիւնը յոժարութեամբ ընդունուեց Վարչութեան կողմից և որտեղ շարունակ տեղի են ունենում վարչական նիստերն ու ընկերութեան վերաբերեալ բոլոր գործերը։

Ընկերութեան մուտքի գլխաւոր աղբիւրներն են եղել՝ անդամակցական վճարները, զբօսանքներն ու երեկոյթ-թատրոնը, նպաստները, նուէրները։ Այսպէս՝ սոյն հաշուէտուութեան տարում Վարչութիւնը կազմակերպել է երկու զբօսանք։

Որ զուտ արդիւնք է տուել	1063	ր. 98	կոպ.
անդամակցական վճարներ ստացուել են	430	» —	»
նպաստ Թիֆլիսի ժողովարանից	200	» —	»
ներկայացումից Արտ. թատրոնում զուտ	215	» 73	»
նուէրներ կանխիկ փողով	147	» 50	»
« դասագրքերով	205	» 65	»
ապառիկներից ստացած է	12	» 40	»
մնացորդ գումար եղել է դրամարկղում	42	» 02	»
Մուտքի գումարն է	2317	ր. 28	կ.

Սոյն հաշուէտուութեան տարում ընկերութեան ելքի յօդուածները եղել են հետևեալները՝

վճարուած է դասատուներին ուսումնական տարիներում 1909/1910 և 1910/1911	1510 ր.	02 կ.
Դասագրքերի և դասարանական պիտոյքների համար	106 »	12 »
Աշակերտների հագուստեղէն, ոտնաման և այլ ծախքերի	85 »	78 »
Դպ. ծառային հին մնացած պարտքը և նորը	67 »	— »
« վարձը 9 ամսուայ. 15 ռուբլուց	135 »	— »
« համար վառելափայտ	17 »	50 »
Ելքի գումարն է	1921 ր.	42 կ.

Հանելով մուտքի գումարից ելքի գումարը կմնայ 395 ր. 86 կոպ. որից դրամարկղում մնում է 50 ր. 86 կոպ.

Երկրորդ Փոխադ. Վարկի Ընկ. բանկում.	345 ր.	— —
Բոլորը՝	395 ր.	86 կոպ.

Դրամարկղում աւելորդ փող չպահելու համար Վարչութիւնը բաց արեց Թիֆլիսի Երկրորդ Փոխադարձ Վարկի Ընկերութեան մէջ պայմանական ընթացիկ հաշիւ «Լոյս» Ընկերութեան անունով № 139.

Այսպիսով Վարչութիւնը յընթացս 1910 թ. և 1911 թուի մինչև Սեպտեմբերի 1-ը մուտք է ունեցել 2317 ր. 28 կ. իսկ ելք՝ 1921 ր. 42 կ. մնացորդ գումար առ 1-ն Սեպտեմբեր 1911 թ. 395 ր. 86 կոպ։ Որպէս զի հնարաւոր լինի վճարել դասատուների հին մնացած պարտքերը և թէ ծածկել ընթացիկ ծախքերը, Վարչութիւնը մէկ կողմից աշխատել է նիւթական միջոցներ գտնել, միւս կողմից կոչ է արել ընկերութեան անդամ՝ ուսուցիչ վարժուհիներին օգնութեան հասնել դպրոցական գործին և վերջիններս մեծ պատրաստականութեամբ յանձն են առել օգնել իրենց աշխատանքով. ոմանք բոլորովին ձրի պարապելով, ոմանք կիսով չափ ձրի, ոմանք էլ չնչին վարձատրութիւն ստանալով, որով բաւական նպաստել են ընկերութեան միջոցների բարւոքման։

1910/1911 Ուսումնական տարում յանձն են առել ձրի դասեր պարապելու հայր Ղևոնդ քհյ. Մէհրաբեան,

հայր Ղևոնդ քհյ. Ալիխանեան, տիկ. Հ. Օհանեան, օր. Վ. Սափարեան, իսկ. պ. Բ. Ամիրաղեան չնայած յանձն էր առել և մօտ կէս տարի ձրի պարապեց, բայց հիւանդութեան պատճառով հնարաւորութիւն չունեցաւ շարունակել մինչև տարուայ վերջը։ Սոյն տարում դասագինը եղել է 20 ռուբլի։

Վարչութիւնը առանձնապէս ուշադրութիւն դարձրեց դպրոցի վերայ և նրա պահանջների ու կարիքների հետ մօտիկ ծանօթանալու համար առաջարկուեցաւ Վարչութեան անդամներին յաճախ այցելել դպրոցը, որպէս զի այդ միջոցով հնարաւոր լինի ստեղծել դպրոցական ներքին բարեկարգ վիճակ։

Բացի վարչական նիստերից, տեղի են ունեցել և խառն խորհրդակցական ժողովներ դպրոցական հարցերի՝ այն է աւանդելի առարկաների, գործնական արհեստներ մտցնելու, որը սկզբունքով որոշուած և ընդունուած է Վարչութեան կողմից և այլ հարցերի մասին։ Մանաւանդ շօշափուել է այն գլխաւոր հարցը՝ թէ ինչպէս անել, որ Ընկերութեան նիւթական մասը ուժեղացնել դտնելով մի քանի հաստատուն եկամտի աղբիւրներ։

Այս ուղղութեամբ աշխատելով, Վարչութեան յաջողուել է դանազան հաստատութիւնների և անձերի համակրանքը ձեռք բերել, որի հետևանքն է եղել այն, որ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը նշանակել է Ընկերութեան նպաստ՝ չնայած փոքրիկ, բայց իր նշանակութիւնն ունեցող մի գումար, տարեկան հարիւր ռուբլի։

Թիֆլիսի ժողովարանը երբէք չէ խնայել օգնութեան հասնել դպրոցական համակրելի գործին, յատկացնելով ամենայն տարի նպաստ հարիւրական ռուբլի։ Ի դէպ, այստեղ յիշելու է Թիֆլիսի ժողովարանի-յանձին Աւագների Խորհրդի,-բռնած գեղեցիկ, և համակրելի դիրքը դէպի բարեգործական և կրթական հաստատութիւնները, որոնց անխտիր, իւրաքանչիւր տարի, հասնում է օգնութեան նիւթական նպաստներով։ Շնորհակալութեան արժանի լաւագոյն գործ։

Ընկերութեան նպատակը իմանալով և նրա գործունէութեան հետ մօտիկ ծանօթանալով, շատերը ուրախութեամբ անդամակցում են. այսպէս օրինակ պ. Կոստանդին Մէհրաբեան յոժարակամ առաջարկեց անդամակցել, խոստանալով ամենայն տարի վճարել ընկերութեանը 25 ական ռուբլի։

Դպրոցի վիճակը բարելաւելու համար երբ անհրաժեշտ էր ունենալ առանձին վարձով բնակարան, նստարաններ-գրատախտակներ, աթոռներ և ուրիշ դպրոցական իրեր որոնք միանգամայն բացակայում էին, այդ ժամանակ Վարչութիւնը զանազան կողմ դիմումներ է անում և հանում են օգնութեան Ներսիսեան Դպրոցի յարգելի Հոգաբարձութիւնը, տեսչի պաշտօնակատար պ. Յովսէփ Խունունց և Յովնանեան օրիորդաց դպրոցի տեսուչ պ. Ստեփան Մալխասեանը-յատկացնելով Ընկերութեանս դպրոցին հարկաւոր չափով նստարաններ և գրատախտակներ։ Մնացած մասը վարչութիւնը ինքը հոգաց մասամբ իր, և մասամբ Ընկերութեան միջոցներից։

Այս բոլորը պատրաստելուց յետոյ, անմիջապէս ձեռնարկուեց բնակարան վարձելու հարցին, որը և գտնուեցաւ 5- քաղաքամասում, Քարափի Սբ. Գէորգ եկեղեցու մօտ, Ամիրեանի տանը, ամսական 15 ռուբլիով.ը աղկացած երեք սենեակից. երկուսը՝ դասարանների համար, իսկ մէկը՝ իրրև ուսուցչանոց։

Այսպիսով՝ 1910 թուի սեպտեմբեր ամիսը դեռ չեկած Ընկերութեան առանձին դպրոց ունենալու հարցը արդէն կարգադրուած վերջացած էր։

1910/1911 Ուսումնական տարին վերջանալուց յետոյ Վարչութիւնը որոշել էր դպրոցի համար աւելի յարմար բնակարան գտնել և տեղափոխուել. դրա համար ամբարային ամիսները աւելորդ բնակարանի վարձ չտալու համար, խնդրեց Քարափի Սբ. Գէորգ եկեղեցու երեցփոխին, եկեղեցական դատարկ սենեակներից մէկը յատկացնել դպրոցի նստարանները և այլ իրեղէնները ժամանակաւորապէս զետեղելու համար, որպիսի համաձայնութիւնը ստանալուց յետոյ, Վարչութիւնը դատարկեց դպրոցական բնակարանը և այդպիսով տնտեսեց երեք ամսի վարձ 45 ռուբլի։

Վարչութիւնը յետ չէ մնացել նաև մասնակցելուց հասարակական բնաւորութիւն կրող երևոյթներին, այսպէս օրինակ, երբ 1910 թուի մայիսի 6-ին Արտիստական Ընկերութեան թատրոնում կատարուեցաւ պ. Գէդէոն Միրաղեանի բեմական գործունէութեան 25 ամեակը և 1911 թուի մայիսի 22-ին, նոյն տեղում, Շիրվանզադէի գրական գործունէութեան 30 ամեակը, Վարչութիւնը մասնակցեց այդ տօնախմբութիւններին իւր առանձին ներկայացուցիչներով և շնորհաւորական ուղղերձներով, մատուցանելով պ. Գ. Միրաղեանին, իբրև նուէր, տուփի մէջ արծաթէ անօթեղէն. իսկ Շիրվանզադէին գունաւոր, գեղեցիկ նկարուած պապկա ուղղերձով, որի նկարը յոժարութեամբ յանձն էր առել կատարել պ. Մ. Էքսիւզեան։ Երբ 1910 թուի Նոյեմբեր ամսին Թիֆլիսի Քաղաքագլխի պաշտօնի մէջ հաստատուեց պ. Ա. Իվ. Խատիսեանը, այդպիսի մի յարգելի, գործունեայ և շիտակ անձի-բարձր պատասխանատու պաշտօնի կոչումը անշուշտ ուրախալի հասարակական երևոյթ էր և Վարչութիւնը լիազօրութիւն տուեց իւր նախագահին առանձին գրութեամբ, անձամբ ներկայանալով, շնորհաւորել Նրան իբրև Թիֆլիսի Քաղաքագլխի, որպիսի Ցանձնարարութիւնը և կատարուել է։

1911 թուին, Դեկտեմբեր ամսին, ի Տէր հանգեաւ Էջմիածնում վեհափառ Մատթէոս II Իզմիրլեան Կաթողիկոսը. Վարչութիւնը շտապեց հեռագրով, յանուն Սրբազան Տեղակալի, իւր վիշտը յայտնել ազգային այդ մեծ կորուստի առթիւ, և դպրոցի դասերը դադարեցնելուց յետոյ, ի նշան ազի հոգեհանգիստկատարեց Քարափի Ս. Գէորգ եկեղեցում Վարչութեան անդամների, դպրոցի դասատուների և աշակերտների ներկայութեամբ, որից յետոյ Վարչութեան փոխնախագահ հայր Խորէն քհ. Խուցեան ազգու և գեղեցիկ կերպով բացատրեց օրուայ նշանակութիւնը և ազգային այդ մեծ կորուստը։ Ի յիշատակ այդ օրուայ դպրոցի 10

մանուկներին բաժանուեցան հագուստեղէն և ոտնամաններ։

1911 թուի Ապրիլ ամսին Պետերբուրգում վախճանուեց ազգային բարերար Աղէքսանդր Մանթաշեանը, որի ժառանգներին հեռագրով ցաւակցութիւն յայտնելուց յետոյ, Վարչութիւնը թաղմանը ամբողջ կազմով ներկայ եղաւ և առանձին պսակ դնելով հանգուցեալի վերայ, նրա անունով դպրոցում երեք չքաւոր հայմանուկներ պահել որոշեց։

Եղան և անձեր, որոնք իրենց դրամական և ուրիշ նուէրներով օգնեցին Ընկերութեան։ Հաշուէտուութեան տարում ստացուել են նուէրներ հետևեալներից՝

տիկ. Գրիգորեանից ի յիշատակ հանգուցեալ Զ. Գրիգորեանի	50 ր.
պ. Զ. Զօրեանից ի յիշատակ հանգուցեալ մօրը	25 »
պ. Կ. Ղլիչեանից ի յիշ. հանգ. տիկ. Ստեփ. .	10 »
տիկ. Վ. Եաղուբեանից	15 » 50կ.
պ. Իս. Նազարեանից	13 » 60»
պ. Յ. Բասենցեանից	4 » 40»
պ. Վ. Աւանեանից	10 »
պ. Պաւէլ Շատինեանից	10 »
հայր Ղ. քհյ Մէհրաբեանից	3 »
տիկ. Միլեանից	2 »
Զանազաններից	4 »
Գումարն է՝	147ր. 50կ.

Բացի այս, դասագրքեր են նուիրել՝ կրօնի-աբժանապա, տիս Արսէն Աւագ քհյ Բագրատունին, հայոց լեզուի՝ այրի տիկ. Մ. Վանցեան՝ Թուաբանութեան՝ պ. Մ. Սամուէլեանի կազմածը և Էջմիածնի հաշուով տպագրածը չքաւոր հայ մանուկների համար։

Ընկերութեան մեծապէս նպաստել է և իւր անդամ տպարանատէր պ. Վահագ Վարդանեանցը, որը երբէք չէ խնայել կատարել տպարանական գործերը շատ անգամ ձրի, շատ անգամ ևս ամենաչնչին վարձատրութեամբ. այս բոլորին Վարչութիւնը ժամանակին յայտնել է իւր շնորհակալութիւնը։

1911 թ. Մայիսի 1-ին Վարչութիւնը հրաւիրեց Ընդհանուր ժողով, որը կայացաւ Կ. Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում նախագահութեամբ պ. Զանանկիր Աթայեանի, քարտուղարութեամբ տիկ. Սաթ. Մալխասեանի։

Նախագահի առաջարկութեամբ Վարչութեան նախագահ պ. Ա. Աւագեան զեկուցեց Ընկերութեան գործունէութեան մասին սկսած 1910 թուից մինչև Մայիսի 1-ը, 1911 թ. յայտնելով, որ Վարչութիւնը որոշել է տեղեկագիրը կազմել 1910 թուից մինչև 1911 թուի Սեպտեմբեր 1-ը, որից յետոյ, Ընկերութեան տարին ևս դպրոցականի նման հաշուելու է Սեպտեմբերից-Սեպտեմբեր։ Ընդհանուր ժողովը հաւանութիւն տուեց այդ որոշմանը և հաստատեց 1911/1912 թուի նախահաշիւը, որը բերուած է նախորդ երեսներում։ Հաշիւների վերաբերեալ մանրամասն տեղեկութիւն տուեց Վարչութեան անդամ-գանձապահ պ. Կ. Ղլիչեան։

Այս ընդհանուր ժողովում Վարչութեան հեռացած անդամների՝ օր. Ա. Քոչեանի, պ. Ա. Զմշկեանի տեղ կատարուեցան լրացուցիչ ընտրութիւններ։ Ընտրուեցան՝ Վարչութեան անդամներ՝ տիկ. Հ. Նաւասարդեան, տիկ. Աղաջանեան, պ. Զ. Աթայեան և Ա. Փաշայեան։ Իսկ փոխանդամներ՝ պ.պ. Վ. Աւանեան և Ա. Դաւթեան։

Տիկ. Նաւասարդեանի և Ա. Փաշայեանի հրաժարման պատճառով նոցա տեղ հրաւիրուեցան պ.պ. Վ. Աւանեան և Ա. Դաւթեան, որպիսի կազմով և Վարչութիւնը շարունակեց իւր գործունէութիւնը։

Նախահաշիվ 1910 - 1/IX 1911 թ.

ՄՈՒՏՔ			ԵԼՔ		
Անդամավճարներից	550	—	Դպրոցի դասատուներին Ա. Բ. և Գ. . .		
Զբոսանքից	300	—	բաժանմունքների	1350	—
Եբեկոյթից և ներկայացումից . . .	550	.	Գրքերի, տետրակների և դաս. պիտույք. .	300	—
Նուէրներից	2 0	—	Շորերի և ոտնամանների	150	—
Նպաստներից	400	—	Դրասենեակի, ծառային	100	—
			Փայտի, տպագրագ. և այլ ծախքեր . . .	100	—
	2000			2000	—

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԻ

1910 թ.—1/XI 1911 թ.

Մնում է դրամարկ. առ 1-ն յունվ. 1910 Թ.			42	02
Ա.նդամավճարներ				
Ստացուած է 1910	270	—		
« մինչև I/IX 1911 Թ.	160	—	430	—
Նպաստներ				
Ստացուած է Թիֆլիսի ժողով. 1910 Թ. . .	100	—		
« « « 1911 Թ. . .	100		200	—
Նուէրներ				
Ստացուած է տիկ. Գրիգորեանից	50	—		
« պ. Զ. Զօրեանից	25	—		
« պ. Կ. Ղլիչեանից	10	—		
« տիկ. Վ. Եաղուբեանից . . .	15	50		
« պ. Իս. Նազարեանից	13	60		
« պ. Վ. Աւանեանից	10	—		
« պ. Պ. Շատինեանից	10	—		
« պ. Յ. Բասենցեանից	4	40		
« Հայր զևոնդ քհյ. Մէհրաբեանից	3	—		
« տիկ. Միլեանից	2	—		
« զանազաններից	4	—	147	50
Զբօսանքներից				
Ստացած. է զուտ 1910 Թ. մայիս 5 ի զբօսան.	524	05		
« « 1011 « 9-ի «	539	93	1063	98
Ներկայացումից				
Ստաց. է զուտ 1910 Թ. դեկ. 4-ի ներկայց.			215	73
Դասագրքերով նուէրներ				
Ստացուած գրքերի փող 1910 Թ.	138	50		
« « « 1911 I/XI . . .	67	15	205	65
Ապառիկներ				
Ստացուած է ապառիկներից			12	40
« Չէքով II Փոխ. Վ. Ընկերութ.			55	—
			2372	28

Դասատուներին				
Վճարուած է ուսուցիչներին 1908/1909 ուս. տարուանից մնացած պարտքը	227	16		
» 1909/1910 « » «	636	80		
1910/1911 տարուանը	586	06	1510	02
Դասարանական պիտոյքներ				
Վճարած է դասագրքերի և դասար. պիտոյք.	47	50		
« « « «	58	62	106	12
Հագուստեղէն				
Գնուած է աշակերտ. համար հագուստեղէն	40	88		
Հագուստեղէնի և այլ ծախքերի համար .	44	90	85	78
Դպրոցի վարձ				
Վճարուած է 9 ամսի բնակարանի վարձ 1910 Թ. սեպտ. 1-ից—1911 Թուի Յունիսի 1-ը.			135	—
Դպրոցի ծառային				
Վճարուած է ծառային 1909 Թուից մնացածը	10	—		
« « 1910 « «	25	—		
1911 Թ. ամբողջ տարուանը	32	—	67	—
Դպրոցի վառելափայտ				
Վճարուած է 1910/1911 Թուի դպրոցի համար վառելիքի			17	50
Երկրորդ փոխադ. վարկի Ընկ. Պ. Ընթ. Հ.				
Մուծած է II Փոխ. Վ. Ը. Պ. Ընթ, Հ. № 139			400	—
Մնում է դրամ. առ I/IX 1911 Թ. կանխիկ			50	86
			2372	28

Երկ. Փոխադարձ Վարկի Ընկ

Մուծած է բանկը 1910/1911 Թ.	400 ր. —
	400 ր. —

Պայմ. Ընթ. Հաշիւ № 139

Ստացուած է 1910/1911 Թ.	55 ր. — կ.
Մնացորդ առ I/IX 1911 Թ.	345 ր. — կ.
	400 ր. — կ.

1910/1911 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1910/1911 Ուսումնական տարին առաջինն էր, որ «Լոյս» Ընկերութեան դպրոցը՝ ազատ նախորդ տարիների աննպաստ պայմաններից, բացւում էր առանձնացած, ունենալով իւր շէնքը և դպրոցական անհրաժեշտ ինվէնտարը։

Այս տարի դպրոցը դարձեալ երկսեռ էր և բաղկացած երեք բաժանմունքից՝ Ա., Բ. և Գ., որոնցից երկրորդ և երրորդ բաժանմունքները միացեալ էին։ Չնայած ամենին ցանկալի չէր պահել միացեալ բաժանմունքներ, բայց Վարչութիւնը աչքի առաջ ունենալով Ընկերութեան նիւթական վիճակը և դպրոցական շէնքի անյարմարութիւնը, ստիպուած եղաւ ժամանակաւորապէս հաշտուել այդ հանգամանքի հետ։

Տարուայ սկզբին առաջին և երկրորդ բաժանմունքների համար կատարուեցան ընդունելութիւններ, որից յետոյ աշակերտների թիւը հետևեալն էր՝

Ա.	բաժանմունքում	կային	33	հոգի.	15	տղայ	և 18	աղջ.
Բ.	«	«	20	« .	9	«	և 11	«
Գ.	«	«	25	« .	13	«	և 12	«
3	Բաժանմունքում	կային	78	« .	37	տղայ	և 41	աղջիկ

Տարուայ ընթացքում հեռացել են դպրոցից իրենց կամքով 9 հոգի, որոնց ծնողները տեղափոխուել են ուրիշ քաղաք։ Նորեկների ընդունելութիւնը կատարելուց և Ուսուցչական խումբը կազմելուց յետոյ, սկսուեցան դասերը սեպտեմբեր 15-ին, և տևեցին մինչև 1911 թուի Մայիսի վերջը։ Դասերը սկսւում էին առաւօտեան ժամը $8^1/_2$-ից և տևում մինչև $1^1/_2$-ը ցերեկւայ։

Տարուայ վերջը տեղի ունեցան ստուգութիւններ միայն երրորդ բաժանմունքում. իսկ միւսները առանց ստուգութիւնների փոխադրուեցան։

Ա. բաժանմունքից փոխադրուեցան Բ. բաժանմունք 22 հոգի, 1 հոգի ստացաւ վերաքննութիւն, 10 հոգի մնացին դասարանում։

Բ. բաժանմունքի 14 հոգուց փոխադրուեցան Գ. բաժանմունք 2 հոգի, մնացին դասարանում 12 հոգի։ Այս բաժանմունքի վերաբերմամբ Վարչութիւնը և մանկավարժական ժողովը որոշում կայացրին աչքի առաջ ունենալով, որ հետևեալ տարին չպէտք է լինի միացեալ Գ. բաժանմունք, երկու ամենաառաջադէմ աշակերտներին տեղաւորել ուրիշ ծխական դպրոցների Գ. բաժանմունք, իսկ միւսներին թողնել նոյն դասարանը, որպէսզի հետևեալ տարին նոցանից և Ա. բաժանմունքի լաւ փոխողներից կազմել ուժեղ Բ. բաժանմունք։ Այս է պատճառը, որ Ա. և Բ. բաժանմունքներում մնացողների թիւը աչքի ընկնող թիւ է կազմում։

Գ. բաժանմունքը աւարտեցին և վկայական ստացան 15 հոգի վերաքննութիւն ստացան 4 հոգի։ Դպրոցի աշակերտները ազատ էին այս տարի ևս նախորդ տարիների նման ուսման վճարից, միայն ամբողջ տարուայ դասագրքերի, տետրակների, և այլ դասարանական պիտոյքների համար, որոնք կարող էին, բերում էին 1—3 բուբլի, միւս մնացածները ստանում էին Ընկերութիւնից ձրի։

Հնարաւոր չափով բաժանւում էր և հագուստեղէն և ոտնամաններ. կամ հաւաքելով իբրև նուէր, և կամ գնելով Ընկերութեան սուղ միջոցներից։

Այս տարի Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ձրի ճաշարանից ստանում էին ճաշ 15 հոգի. 4 տղայ և 11 աղջիկ։

Դպրոցական առանձին շէնք ունենալը, դասերի կանոնաւոր առաւօտեան ժամերին սկսելը և վերջացնելը, Ուսուցչական խմբի գործին լաւ վերաբերմունքը, անշուշտ թողնում էին իրենց լաւ ազդեցութիւնը դպրոցական կեանքի վերայ։

1910/1911 Ուսումնական տարում դպրոցի ուսուցչական խումբը բաղկացած էր 5 հոգուց. 2 վարժուհի և

3 ուսուցիչ, որոնց ցանկը և աւանդած առարկաները ստորագրուած ցուցակից կ'երևայ։ Աւագ վարժուհու պաշտօնը կատարել է տիկ. Շ. Խաժակնեան, իսկ վերակացութիւն արել են ուսուցիչները հերթով։

Երկրորդ կիսամեակում ուսուցչական խմբի մէջ տեղի են ունեցել փոփոխութիւններ. հայր. Ղ. քհյ. Ալիխանեանը հոգևոր Իշխանութեան կողմից նոր պաշտօնի հրաւիրուելով, թողեց կրօնի 4 դասը, որը յանձն առաւ պարապել ձրի հայր Ղ. քհյ. Մէհրաբեան։

Տիկ. Հ. Օհանեան, փեսրուար ամսին ընտանիքով տեղափոխուելով Երևան, ստիպուած էր թողնել նկարչութեան և ձեռագործի 4 դասը, որի համար հրաւիրուեցաւ օր. Վ. Սափարեանը. վերջինս պարապեց այդ դասերը նոյնպէս ձրի։ Պ. Բ. Ամիրաղեանը տարուայ վերջը հիւանդանալով չ'կարողացաւ յաճախել դասերին։

Տարուայ ընթացքում դպրոցի աշակերտները Վարչութեան անդամների և դասատուների հետ միասին մի քանի անգամ գնացել են պրոժէկտոր, որ տրւում էր բացառապէս չքաւոր աշակերտների համար և որտեղ ցոյց էին տրւում օգտակար, նրանց հասակի համեմատ դիւրըմբռնելի պատկերներ բացատրութեամբ հանդերձ։

Նոյնպէս տեղի են ունեցել աշակերտական զբօսանքներ, որտեղ աշակերտներին տրուել է թէյ, ուտելեղէն, միրգ։ Զբօսանքները անցել են շատ ուրախ. խմբական երգերով ու խաղերով մեծերի ղեկավարութեամբ։

Սոյն ուսումնական տարում եղել են հիւանդութեան եզակի դէպքեր, բայց տարափոխիկ հիւանդութիւններ դպրոցում չեն նկատուել, կասկածելի դէպքերում, իսկոյն երեխաներին տուն են ուղարկել և մինչև բժշկի վկայական չեն ներկայացրել, չեն մտել դպրոց։

Մահուան դէպք տեղի չէ ունեցել։

Երեխաները լինելով որբ և ամենաչքաւոր դասակարգից կարիք են ունեցել և հագուստեղէնի, և ուտելիքի և ուրիշ պէտքերի, որոնց Ընկերութիւնը հնարաւոր չափով, բացի ձրի ուսումից, հասել է օգնութեան։

Որբ, փողոց նետուած և չքաւոր երեխաների այս համախմբումը և խնամատարութիւնը «Լոյս» Ընկերութեան կողմից այնպիսի մի գործ է, որ չի կարող համակրութիւն չգտնել բարի ձգտումներով օժտուած սրտերի մէջ և արժանի է հասարակութեան թէ բարոյական և թէ նիւթական զօրեղ օժանդակութեան. և Վարչութիւնը վստահ է, որ մեր հասարակութիւնը երբէք չէ խնայել, և չի խնայէ, իւր լուման ձգելու որբ և անպաշտպան հայ երեխայի դաստիարակութեան գործի մէջ։

Վերջացնելով «Լոյս» Ընկերութեան սկզբնաւորութիւնից մինչև սեպտեմբեր մէկը 1911 թուի-մօտ 4 տարուայ-գործունէութեան համառօտ ամփոփ տեղեկագիրը, Վարչութիւնը յայտնում է, որ եթէ թերութիւնները լինեն, այդ ևս վերագրելու է այն երկու հրդէհներին, որոնք պատահեցան սապէօրնայա և Վանքի փողոցներում 1910 թուականին, որտեղ բնակւում էին Վարչութեան նախագահ պ. Գ. Լևոնեան և քարտուղար պ. Ա. Գրիգորեան, որոնց մօտ էին գտնւում Ընկերութեան թղթերը, և որոնց մի մասը կրակին զոհ գնաց

Նախագահ Վարչութեան՝ Ա. Աւագեանց

Փոխնախագահ Վարչութեան՝ Խորէն քհյ. Խուցեան

Անդամները՝
Արմ. Տէր Վարդանեան
օր. Ա. Քոշեան
Հ. տէր Մէլիտոնեան
Զ. Աթայեան
Վ. Աւանեան
Ա. Դաւթեան
Ա. Զմշկեան

ՀԱՅԿ Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ԱՄԵՆԻԱ, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գանձապահ հաշուապահ՝ Կ. Ղլիչեան

Քարտուղար՝ Սաթ. Մալխասեան

1910/1911

Ի՞նչ առարկաներ են անցել	Որքան դաս I բաժ.	Որքան դաս II III և բ.
	Շաբաթական	
Կրօն	2	2
Հայոց լեզու	5	5
Ռուսաց լեզու	5	5
Թուաբանութիւն	4	4
Աշխարհագրութիւն	—	2
Բնական պատմութիւն	—	2
Նկարչութիւն	1	1
Երգեցողութիւն	2	2
Ձեռագործ	1	1
Գումարն է	20	24

1910/1911 Ուսումն. տարի

Կարգ	Անուն և ազգանուն ուսուցիչների	Դասընթացքներ ըստ ամսաթվերի								Շաբաթական դասերի թիւը.	Տարուայ մէջ բաց թողած դասերի թիւը	աւել պարապած. դասեր	Ինչ՞ ցնոյց ունեն
		Կրօն	Հ. Լ.	Ռ. Լ.	Թուաբ.	Աշխար.	Բն. պատ.	Նկարչ.	Երգ.	Ձեռագ.			
1	տիկ. Շ. Խաչատրեան .	—	—	10	8	—	—	—	—	—	18	34	4	Թ. 3. Св. Н. և մ. 8 դ.
2	Հ. Ղևոնդ քհն. Սիկիտեան	4	10	—	—	—	—	—	—	—	14	20	9	Ներսիս. Հ. Հոգ. Դպ.
3	պ. Բ. Սիմիրատեան . . .	—	—	—	—	2	2	—	—	—	4	70	1	« «
4	պ. Սրբ. Տէր Յովսէփեան	—	—	—	—	—	—	—	4	—	4	13	2	Օրեն. բարձր. Реген.
5	տ. Հայկանուշ Օհանեան .	—	—	—	—	—	—	2	—	2	4	5	—	երաժշտ. դ. Հայուհեաց Բ. Հ. Զ. դ
		4	10	10	8	2	2	2	4	2	44	142	16	

Կարգ.	ՑՈՒՑԱԿ 1990/1911 Ուսումն. տար. աւարտող աշակերտների	№№ Վկայական
1	Աբրահամեան Վարսենիկ	18
2	Արիստակէսեան Վահրամ	19
3	Գաբրիէլեան Գէորգ	20
4	Թորոսեան Գարեգին	21
5	Ճէպէյեան Մարիամ	22
6	Մաղաքեան Արծուիկ	23
7	Միրզոյեան Լուսիկ	24
8	Յարութիւնեան Սարգիս	25
9	Պապեան Անաստաս	26
10	Սարուխանեան Եղիսաբէթ	27
11	Սարուխանեան Պետրոս	28
12	Ստեփանեան Աստղիկ	29
13	Տէր Անդրէասեան Աստղիկ	30
14	Փարտաշեան Շուշանիկ	31
15	Համբարձումեան Ղազար	32

Ընկերութեան անդամները

1910 թ.—1911 թուի Սեպտեմբերի 1-ը.

1. Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեան (Առաջնորդական փոխանորդ Թիֆլիսի Թէմի).
2. Ալիխանեան Ղևոնդ քհյ.
3. Աղամեան տիկ. Կ.
4. Ամբարդանեան Սրապիոն
5. Ամբարդանեան Վ.
6. Անանեան Մարտիրոս
7. Անտոնեան Միսակ
8. Ամիրաղեան Միքայէլ
9. Արամեան Ստեփան
10. Արիստակէսեան Նունէ
11. Աւագեան Առ. Վարչ. Նախ.
12. Աւագեան Սոֆիա
13. Աւագեան Յակոբ
14. Աթայեան Ջահանկիր Վ. ա.
15. Աւանեան Վասիլ վարչ. ան,
16. Բաբայեան Սմբատ
17. Բաղդասարեան Յովհաննէս
18. Բասենցեան Խաչատուր
19. Բասենցեան Յակոբ
20. Բերեան Մարիամ
21. Բէնքլեան Հռիփսիմէ
22. Բուռունսուզեան Գէորգ,
23. Գաբինեան Աննա
24. Գաբինեան Գ.
25. Գալստեան Ստեփան
26. Գասպարեան Նատալիա
27. Գասպարեան Սերոպ
28. Գրիգորեան Արտաւազդ
29. Գրիգորեան Լիզա
30. Գրիգորեան Առաքել
31. Դաւրիշեան Մարիամ
32. Դաւթեան Աւետիս վար-ան.
33. Եաղուբեան Մարիամ
34. Եաղուբեան Վռամ
35. Եղեան Համբարձում
36. Երզնկեան Համասփիւռ
37. Եւանդուլեան Ստեփան
38. Զարգարեան Ժորժ
39. Զարգարեան Նատալիա
40. Զօրեան Զօհրապ
41. Էլչիբէկեան Մարգարիտ
42. Էլչիբէկեան Սաթենիկ
43. Թէրզիբաշեան Նիկողայոս
44. Լէկլեանց Մինաս
45. Լիսիցեան Սահակ
46. Լևոնեան Գարեգին
47. Խաժակնեան Շուշանիկ
48. Խաչիկեան Ստեփան
49. Խարազեան Մարիա Ա.
50. Խուցեան Խորէն քհյ. փոխ-նախ. վ.
51. Կաչկաճեան Զաքար
52. Կարապետեան Աղէքսանդր
53. Կաւալեան Աւագ
54. Հալաչեան Գարեգին
55. Ղալթաղեան Միքայէլ
56. Ղալիչեան Խաչատուր
57. Ղամբարեան Յովհաննէս
58. Ղասաբեան Արշակ
59. Ղլիչեան Կոստանդին Վարչ. Գանձ.
60. Ղորղանեան Դաւիթ
61. Մատինեան Նիկողայոս

62. Մալխասեան Սաթ. Վարչ. քարտ.
63. Մալխասեան Արշակ
64. Մալինեանց Գէորգ
65. Մանուկեան Մնացական
66. Մամուլեան Վերգինէ
67. Մարգարեան Մովսէս
68. Մանասէրեան Եղբարք
69. Մէհրաբեան Կոստանդին
70. Մինասեան Մ.
71. Միրզայեան Միքայէլ
72. Միլեան Վ. Ս.
73. Մէլիք Մուշկամբարեան Հայրապետ
74. Մէլիք Մուշկամբարեան Աննա
75. Մկրտումեան Ստեփան
76. Մկրտչեան Եփրեմ
77. Մովսիսեան Սաթենիկ
78. Մովսիսեան Վարսենիկ
79. Յակոբջանեան Վասվառէ
80. Յարութիւնեան Սամսոն
81. Յարութիւնեան Գ.
82. Յովհաննեսեան Բարսեղ
83. Յովհաննեսեան Յովհաննէս
84. Յովհաննեսեան Համայեակ
85. Նազարեան Սահակ
86. Նահապետեան Յովհաննէս
87. Նաւակատիկեան Յովակիմ
88. Շահբազեան Զանազան
89. Շահումեան Գրիգոր
90. Շահնազարեան Բագրատ
91. Շամչեան Եւդէնիա
92. Շաքարեան Գէորգ
93. Շիրինեան Կարապետ
94. Զաթալպաշեան Յովակիմ
95. Զմշկեան Արամ (Վարչ. անդամ)
96. Պետրոսեան Աբել
97. Պօղոսեան Շմաւոն
98. Ջանեան Յովհաննէս
99. Սաղաթէլեան Մարգար
100. Սաֆրազեան Սաֆրազ
101. Սէյլանեան Արտաշէս
102. Ստեփանեան Սիմէօն
103. Սողոմոնեան Կոստանդին
104. Սունդուկեան Արտէմ
105. Վարդանեան Վահագ
106. Վարդազարեան Մկրտիչ
107. Վանցեան Մարիամ
108. Վասիլեան Յովնան
109. Տէր Յովհաննեսեան Սաթենիկ
101. « Յովհաննեսեան Աննա
111. « Վարդանեան Արմենուհի (Վարչ. անդամ)
112. « Մելիտոսեան Համբարձում (Վարչ. անդամ)
113. « Աբրահամեան Արշակ
114. « Ներսեսեան Ներսէս
115. « Պետրոսեան Յովսէփ քնյ.
116. « Պետրոսեան Ջաւահիր
117. « Գէորգեան Յովհաննէս
118. « Մեսրոպեան Պետրոս
119. Փաշայեան Արամ
120. Քալանթարեան Թամարա
121. Քոչեան Աղաւնի (Վարչ. անդամ)
122. Քոչարեան Թամարա
123. Քոչարեան Կոստանդին
124. Քաթանեան Սիրանոյշ
135. Ֆրանգուլեան Դարիա
126. Ֆրանգուլեան Սմբատ
127. Ֆրանգուլեան Տիգրան

2013

<< Ազգային գրադարան

NL0050405

21853